



«ՀՀ Կամուրջ ծրագիրն իրականացվում է ՀԲԸՄ կողմից՝
ԵՀՀ-ի հետ համագործակցությամբ»

Չին արվեստագետ Մինյե Ժանգի՝ «Գեղարվեստական տպագրության արվեստի զարգացման միտումները Չինաստանում» թեմայով զեկուցման հաշվետվություն

Հոկտեմբերի 12, 2019թ. , 12:00 – 16:00

*Վայրը՝ Հ. Իգիթանի անվան Էսթետիկայի ազգային կենտրոնի տպագրական արվեստանոց,
Հասցե՝ ք.Երևան, Սարյան 31*

Չին արվեստագետ, Գեղարվեստական տպագրության առաջին միջազգային բիենալե, Երևան 2017-ի երկրորդ մրցանակակիր Մինյե Ժանգի հետ Գեղարվեստական տպագրության երկրորդ միջազգային բիենալեի շրջանակում կազմակերպված հանդիպումը տեղի ունեցավ 2019 թվականի հոկտեմբերի 12-ին Հ. Իգիթանի անվան Էսթետիկայի ազգային կենտրոնի տպագրական արվեստանոցում՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի աջակցությամբ և «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության համատեղ ջանքերով:

Հանդիպումը Հայաստանում գեղարվեստական տպագրության ոլորտի ուսանողներին, արվեստագետներին, արվեստի և մշակույթի հասարակական կազմակերպություններին, ինչպես նաև այդ ոլորտով հետաքրքրված այլ անձանց տպագրական արվեստի զարգացման առանձնահատկություններին և միտումներին ծանոթացնելու նպատակ ուներ:

Արվեստագտը նախ բացման խոսք ասաց, ներկայացրեց օրակարգն ու հանդիպման նպատակները, որից հետո «Մշակույթների երկխոսություն» կազմակերպության հիմնադիր նախագահ Մոնա Հարությունյանը ներկաներին դիմեց ողջույնի խոսքով:

Հանդիպմանը Մինյե Ժանգը ներկայացրեց գեղարվեստական տպագրության զարգացման միտումները Չինաստանում, պատմեց Չինաստանի գեղարվեստի ակադեմիայում դասավանդման իր մեթոդների, ինչպես նաև դրանց հիման վրա ստեղծված իր աշխատանքների մասին, որոնք արտացոլում են ներկա աշխարհի նմանություններն ու տարբերությունները քաղաքական, տնտեսական, մշակութային ու ազգային տեսանկյուններից:

Արվեստագետը նաև ներկայացրեց Հայաստանում եղած ժամանակ՝ 2019 թվականի հոկտեմբերի 7-11-ն ընկած ժամանակահատվածում ստեղծած իր աշխատանքները, ինչպես նաև խոսեց դրանցում օգտագործված գունավոր փայտափորագրության հմտությունների մասին:

Ներկաները դիտեցին չին արվեստագետ, Գեղարվեստական տպագրության փորձագետ Մինյե Ժանգի կյանքի և ստեղծագործության մասին պատմող ֆիլմ:

Հանդիպման վերջում ծավալվեց քննարկում, ինչպես նաև չին փորձագետի՝ ներկայումս ընթացող անհատական ցուցահանդեսի և տպագրական արվեստանոցում արված աշխատանքների վերլուծություն:

Նշենք, որ հանդիպմանը այլ հյուրերի հետ միասին ներկա էին արվեստագետներ և այլ հյուրեր Շվեդարիայից՝ նկարչուհի Դանիելա Էրնին, Մայքլ Շուլերը, արվեստաբան Այրիս Կրետշմարը, ճարտարապետ Օլաֆ Ռոհրերը և գերմանացի արվեստագետ Նորբերտ Ֆլեշը:

Հանդիպման և Մինյե Ժանգի անհատական ցուցահանդեսի մասին մանրամասն տեղեկություն կարելի է գտնել Մ. Սարյանի տուն-թանգարանի, ինչպես նաև «Մշակույթների երկխոսություն» (KulturDialog Armenien) կազմակերպության կայքերում և ֆեյսբուքյան էջերում: